

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/21/ԵՀ
հրահանգ**

**Դրոշի պետության պահանջներին համապատասխանության Եվրոպական տնտեսական
տարածքին առնչվող տեքստ**

Պաշտոնական տեղեկագիր L 131, 28.05.2009թ., էջեր 0132 - 0135

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» համաձայնագիրը եւ,
մասնավորապես, դրա 80(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանների կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [3],

Քանի որ

- 1) Համայնքի նավագնացության եւ դրանից օգտվող քաղաքացիների անվտանգությունն ու
շրջակա միջավայրի պաշտպանությունը պետք է բոլոր ժամանակներում ապահովվի,
- 2) միջազգային նավագնացության առնչությամբ ծովային փոխադրումների
անվտանգությունը եւ նավերից առաջացող՝ շրջակա միջավայրի աղտոտումից
պաշտպանությունը բարելավող համապարփակ շրջանակ է սահմանվել մի քանի
կոնվենցիաներ ընդունելու միջոցով, որոնց պահառուն Ծովագնացության միջազգային
կազմակերպությունն է (այսուհետ՝ ԾՄԿ),
- 3) 1982 թվականի «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի (ՄԱԿԾԻ) եւ այն
կոնվենցիաների դրույթների համաձայն, որոնց պահառուն ԾՄԿ-ն է (այսուհետ՝ ԾՄԿ
կոնվենցիաներ), այս փաստաթղթերի կողմ հանդիսացող պետությունները պետք է
հրապարակեն օրենքներ եւ կանոնակարգեր ու այլ քայլեր ձեռնարկեն, որոնք անհրաժեշտ
են՝ այս փաստաթղթերը լիակատար եւ ամբողջությամբ կիրառելու համար, այնպես որ

ապահովվի, որ ծովում կյանքի անվտանգությունից ելնելով եւ ծովային միջավայրի պաշտպանության համար տրամադրվող ծառայություններին համապատասխանող նավ տրամադրվի եւ համալրվի ծովային հարցերում իրավասու աշխատակազմով,

4) բավարար չափով պետք է հաշվի առնվի Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 2006 թվականին ընդունված «Ծովային աշխատանքի մասին» կոնվենցիան, որը նաեւ անդրադառնում է դրոշի պետությանը վերաբերող պարտականություններին,

5) 2008 թվականի հոկտեմբերի 9-ին անդամ պետությունները հայտարարություն արեցին, որում միաձայն ճանաչեցին դրոշի պետությունների պարտականություններին վերաբերող միջազգային կոնվենցիաների կիրառումը՝ ծովային անվտանգությունը բարելավելու եւ նավերից առաջացող աղտոտումը կանխարգելելուն նպաստելու համար,

6) 2004 թվականի դեկտեմբերի 20-ի «Պետությունների միջեւ նավերի փոխադրման մասին» MSC/Circ.1140/MEPC/Circ.424 ԾՄԿ-ի կողմից առաջարկված ընթացակարգերի կիրառումը պետք է ամրապնդի ԾՄԿ կոնվենցիաների եւ Համայնքի ծովային անվտանգության օրենսդրության դրույթները, որոնք վերաբերում են դրոշի փոփոխությանը եւ պետք է ավելացնեն դրոշի պետությունների միջեւ հարաբերությունների թափանցիկությունը՝ ծովային անվտանգությունից ելնելով,

7) անդամ պետության դրոշը կրող նավերի, ինչպես նաեւ անդամ պետության ռեգիստրից դուրս եկած նավերի մասին տեղեկատվության հասանելիությունը պետք է բարելավվի բարձրորակ նավատորմի աշխատանքների թափանցիկությունը եւ նպաստի դրոշի պետության պարտականությունների դիտանցմանն ու հավասար մրցակցային պայմաններ ապահովի վարչական մարմինների միջեւ,

8) որպես դրոշի պետություններ՝ անդամ պետություններին՝ իրենց գործունեության արդյունավետությունը բարձրացնելու հարցում օգնելու համար՝ նրանք պետք է պարբերաբար վերահսկողություն իրականացնեն իրենց վարչական մարմնի նկատմամբ,

9) վարչարարական ընթացակարգերի որակավորման վկայագրումը Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ՍՄԿ) չափանիշների համաձայն կամ հավասարազոր չափանիշները պետք է ապահովեն հետագա հավասար մրցակցային պայմանները վարչական մարմինների միջեւ,

10) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման

ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը [4] համապատասխան,

11) սույն Հրահանգի նպատակը, այն է՝ ծովային տրանսպորտի քաղաքականության ոլորտում համապատասխան միջոցառումների ներմուծումը եւ իրականացումը, առանձին գործող անդամ պետությունների կողմից չի կարող բավարար չափով իրականացվել եւ, հետեւաբար, իր մասշտաբի եւ ազդեցության նկատառումներով, կարող է առավել լավ իրականացվել Համայնքի մակարդակում, Համայնքը կարող է միջոցներ որդեգրել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Համաչափության սկզբունքին համապատասխան, ինչպես սահմանված է այդ հոդվածով, սույն Հրահանգը չի սահմանազանցում այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ միջոցների շրջանակը,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան

1. Սույն հրահանգի նպատակն է՝

ա) ապահովել, որ անդամ պետությունները արդյունավետորեն եւ պարբերականորեն իրենց պարտականություններն իրականացնեն որպես դրոշի պետություններ եւ

բ) ամրապնդել անվտանգությունը եւ կանխարգելել անդամ պետության դրոշը կրող նավերից առաջացող աղտոտումը:

2. Սույն Հրահանգը չի հակասում Համայնքի ծովային օրենսդրությանը, ինչպես նշված է Խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի Անվտանգ ծովերի եւ նավերից առաջացող աղտոտումը կանխարգելող կոմիտեն հիմնադրող թիվ 2099/2002 կանոնակարգի 2(2) հոդվածում (ԱԾՆԱԿԿ) [5] եւ Խորհրդի 1999 թվականի հունիսի 21-ի «Եվրոպական համայնքի նավերի սեփականատերերի ասոցիացիայի (ԵՀՆՍԱ) եւ Եվրոպական միության տրանսպորտի աշխատողների միության ֆեդերացիայի (ՖՏԱ) միջեւ կնքված նավաստիների աշխատանքային ժամանակի կազմակերպման պայմանագրի մասին» 1999/63/ԵՀ հրահանգին [6]:

Հոդված 2

Գործողության ոլորտը

Սույն Հրահանգը կիրառվում է այն պետության վարչական մարմինների նկատմամբ, ում դրոշը կրում է նավը:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներից ելնելով՝ կիրառվում են հետևյալ սահմանումները՝

ա) «նավ» նշանակում է նավ կամ ծովային փոխադրամիջոց, որը կրում է անդամ պետության դրոշը ԾՄԿ համապատասխան կոնվենցիաների շրջանակում եւ որի համար վկայական է անհրաժեշտ,

բ) «վարչական մարմիններ» նշանակում է անդամ պետությունների իրավասու մարմինները, որոնց դրոշը կրում է նավը,

գ) «ճանաչված կազմակերպություն» նշանակում է այն կազմակերպությունը, որը ճանաչվել է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի «Նավերի ստուգման եւ հետազոտություն իրականացնող կազմակերպությունների (վերամշակում) ընդհանուր կանոնների եւ չափանիշների մասին» թիվ 391/2009 կանոնակարգի (ԵՀ) համաձայն,

դ) «վկայականներ» նշանակում է օրենքով նախատեսված վկայականներ, որոնք տրվում են ԾՄԿ համապատասխան կոնվենցիաների համաձայն,

ե) «ԾՄԿ աուդիտ» նշանակում է աուդիտ, որն իրականացվել է A.974(24) բանաձեւի դրույթներին համապատասխան, որն ընդունվել է 2005 թվականի դեկտեմբերի 1-ին ԾՄԿ խորհրդի կողմից:

Հոդված 4

Այն պայմանները, որոնք թույլ են տալիս նավը շահագործել անդամ պետության դրոշը տեղադրելու իրավունք ստանալուն պես1. Տվյալ անդամ պետությունը, նախքան իր դրոշը տեղադրելու իրավունք ստացած նավի շահագործման թույլտվությունը, այնպիսի միջոցներ է ձեռնարկում, որոնք կարծում է, որ անհրաժեշտ են տվյալ նավի՝ կիրառվող միջազգային

կանոններին եւ կանոնակարգերին համապատասխանությունն ապահովելու համար: Մասնավորապես, այն բոլոր ողջամիտ միջոցներով ստուգում է նավի անվտանգության ցուցանիշները: Անհրաժեշտության դեպքում այն խորհրդակցում է տվյալ դրոշի ներքո չնավարկող պետության հետ՝ ճշտելու, թե արդյոք վերջինիս կողմից հայտնաբերված զգալի թերությունները կամ անվտանգության խնդիրները չեն լուծվում:

2. Երբ այլ դրոշ պետություն տեղեկություն է պահանջում այն նավի մասին, որը նախկինում կրում էր անդամ պետության դրոշը, այդ անդամ պետությունն անմիջապես ներկայացնում է զգալի թերությունների եւ ցանկացած այլ անվտանգության հետ առնչվող տեղեկությունը պահանջող դրոշի պետությանը:

Հոդված 5

Անդամ պետության դրոշը կրող նավի կալանք

Երբ վարչական մարմիններին տեղեկացնում են, որ տվյալ անդամ պետության դրոշի ներքո նավարկող նավի հետագա նավարկությունը հետաձգվել է նավահանգիստ ունեցող որեւէ պետության կողմից, ապա այն պետք է իր կողմից մշակված ընթացակարգերի համաձայն վերահսկի, որ նավի վիճակը համապատասխանեցվի ԾՄԿ կոնվենցիաներին:

Հոդված 6

Հարակից միջոցներ

Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց դրոշը կրող նավերի վերաբերյալ առնվազն հետեւյալ տեղեկատվությունը պահպանվի եւ հասանելի լինի՝ սույն Հրահանգի նպատակներից ելնելով:

ա) նավի տվյալները (անունը, ԾՄԿ համարը եւ այլն),

բ) ուսումնասիրությունների ամսաթվերը՝ ներառյալ լրացուցիչ ուսումնասիրությունները, եթե այդպիսիք կան եւ աուդիտը,

գ) նավի վկայագրման եւ դասակարգման մեջ ներգրավված ճանաչված կազմակերպությունների նույնականացումը,

դ) իրավասու մարմնի որոշումը, որն ստուգել է նավը պետության նավահանգստի վերահսկողության մասին դրույթների համաձայն եւ ստուգումների ժամկետները,

ե) պետության նավահանգստի հսկողության ստուգումների արդյունքը (թերություններ՝ այո կամ ոչ, կալանք՝այո կամ ոչ)

զ) ծովային պատահարների մասին տեղեկություն,

է) նավերի որոշումը, որոնք դադարել են կրել տվյալ անդամ պետության դրոշը նախորդ 12 ամսվա ընթացքում:

Հոդված 7

Դրոշի պետության աուդիտի ընթացակարգը

Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ յոթ տարին առնվազն մեկ անգամ իրենց վարչարարության ԾՄԿ աուդիտի համար, եթե տվյալ անդամ պետության ժամանակին արված պահանջին ԾՄԿ-ն դրական արձագանք է տվել եւ հրապարակում են աուդիտի արդյունքը գաղտնիության մասին համապատասխան ազգային օրենսդրության համաձայն:

Սույն հոդվածը ուժը կորցնում է 2017 թվականի հունիսի 17-ին կամ ավելի վաղ, ինչպես նախատեսված է Հանձնաժողովի կողմից 10(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգով, եթե ԾՄԿ անդամ պետության պարտադիր աուդիտը ուժի մեջ է մտել:

Հոդված 8

Որակի կառավարման համակարգը եւ ներքին գնահատումը

1. 2012 թվականի հունիսի 17-ի դրությամբ յուրաքանչյուր անդամ պետություն մշակում, իրականացնում եւ պահպանում է դրոշի պետությանն առնչվող վարչարարության գործառական մասի որակի կառավարման համակարգը: Նման որակի կառավարման համակարգը վկայագրվում է որակի միջազգային չափանիշների համաձայն:

2. Այն անդամ պետությունները, որոնք հայտնվում են սեւ ցուցակում կամ որոնք երկու տարի անընդմեջ հայտնվում են մոխրագույն ցուցակում, որը հրապարակվում է «Նավահանգիստ ունեցող պետության կողմից իրականացվող հսկողության մասին» Փարիզի փոխըմբռնման

հուշագրի տարեկան վերջին զեկույցում (այսուհետ՝ Փարիզի փոխըմբռնման հուշագիր), Հանձնաժողովը հաշվետվություն են ներկայացնում դրոշի պետության գործունեության մասին՝ ոչ ուշ, քան Փարիզի փոխըմբռնման հուշագրի զեկույցի հրապարակումից չորս ամիս հետո: Հաշվետվության մեջ սահմանվում է վերլուծվում են անհամապատասխանության հիմնական պատճառները, որոնք հանգեցրել են կալանքի եւ այն թերությունները, որոնց հետեւանքով ընդգրկվում են սեւ կամ մոխրագույն ցուցակում:

Հոդված 9

Հաշվետվությունները

Յուրաքանչյուր հինգ տարին եւ մինչեւ 2012 թվականի հունիսի 17-ը առաջին անգամ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ սույն Հրահանգի կիրառման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում:

Այս հաշվետվությունը պարունակում է անդամ պետությունների՝ որպես դրոշի պետությունների գործունեության գնահատումը:

Հոդված 10

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Անվտանգ ծովերի եւ նավերից առաջացող աղտոտումները կանխարգելող կոմիտեն (ԱԾԿ), որը հիմնադրվել է թիվ 2099/2002 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածով:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երկու ամիս:

Հոդված 11

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը պետք է գործողության մեջ դնեն ամենաուշը մինչեւ 2011 թվականի հունիսի 17-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում, դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 12

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող 20-րդ օրը:

Հոդված 13

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2009 թվականի ապրիլի 13-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ Պ. Նեչաս

[1] ՊՏ C 318, 23.12.2006թ., էջ 195:

[2] ՊՏ C 229, 22.09.2006թ., էջ 38:

[3] Եվրոպական պառլամենտի 2007 թվականի մարտի 29-ի եզրակացություն (ՊՏ C 27 E, 31.01.2008թ., էջ 140), Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 9-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 330 E, 30.12.2008թ., էջ 13) եւ Եվրոպական պառլամենտի 2009 թվականի մարտի 11-ի դիրքորոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում):

[4] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[5] ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1:

[6] ՊՏ L 167, 02.07.1999թ., էջ 33:

[7] Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 11-րդ էջը: